

Մարգարեա Էդիկ Բարսեղյանի ուղերձը Գիտելիքի օրվա կապակցությամբ

01.09.2012



Միբելի դպրոցականներ, մանկավարժներ

Շնորհավորում եմ Ձեզ Գիտելիքի օրվա և սեպտեմբերի 1-ի կապակցությամբ:

Ողջունելով ուսումնական հաստատությունների սաներին և կրթության և դաստիարակության գործի նվիրյալներին, ուզում եմ բարի երթ մաղթել և ցանկանալ, որ այսօրվա տոնական տրամադրությունը ձեր ուղեկիցը լինի ողջ տարվա ընթացքում՝ նպաստելով կրթության և դաստիարակության գործընթացների արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի բարձրացմանը, նորանոր ձեռքբերումներին ու նվաճումներին՝ ի շահ մեր սիբելի պետությանը, քանզի դուք եք մեր վաղվա օրը կերտողները, ձեր ձեռքերում է հայ ժողովրդի և մեր պետության ապագան:

Հավատացած եմ, որ մեր դպրոցականներն ամենայն պատասխանատվությամբ և հայրենասիրության խորը զգացումով կգիտակցեն իրենց դերը այդ կարևոր գործընթացում, որի արդյունքում կունենանք հայրենասեր, կրթված և բարեկիրթ քաղաքացիներ:

Հարգելի մանկավարժներ, բարձր գնահատելով Ձեր ներդրումը մարզի կրթական համակարգի զարգացման և գրագետ սերունդ դաստիարակելու գործում, համոզված եմ, որ բարձր քաղաքացիական պատասխանատվությամբ կներդնեք բոլոր ջանքերն ու կարողությունները՝ կրթական բարեփոխումների շարունակման և կրթական ոլորտի դերի ու նշանակության բարձրացման, բարեփոխումների ապահովման և նոր ծրագրերի ստեղծման ուղղությամբ:

Մաղթում եմ բոլորին առողջություն, ուժ, եռանդ և հաջողություններ:

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ ԱՐԱՐՍՏԻ ՄԱՐԶՊԵՏ